

# ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն  
Մանրի Առաքման և Վերցնելու Ուղեցույց

## Վերջին Թարմացումները՝

10/30/20: Թարմացվել են տեղեկություններն այն մասին, թե ինչ անել, եթե ունեք ախտանիշներ, վարակվել եք COVID-19-ով կամ հանդիսանում եք COVID-19-ով վարակված անձի հետ սերտ շփում ունեցած անձ:

Մանրի պատրաստման, պահելու, վերցնելու և առաքման ընթացքում պատշաճ վարվելը կարևոր է սպառման համար անվտանգ սնունդ ապահովելու համար: Մանրի հաստատությունները, ինչպես նաև սնունդը առաքող վարորդները առանցքային դեր են խաղում սնունդի անվտանգ առաքումը սպառողներին ապահովելու համար:

## ԿԱՐԵՎՈՐ Է՝ Մնացե՛ք տանը, եթե դուք վարակված եք COVID-19-ով կամ ենթարկվել եք COVID-19-ի ազդեցությանը

- Եթե ունեք [ախտանիշներ](#), ապա պետք է մնաք տանը և զանգահարեք ձեր բժշկին թեստ հանձնելու և մեկուսացման անհրաժեշտության համար: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ [ph.lacounty.gov/covidcare](http://ph.lacounty.gov/covidcare):
- Եթե COVID-19 -ի ձեր թեստի պատասխանը դրական է եղել, կամ բժիշկն ասել է, որ հավանական է՝ COVID-19 -ով վարակված լինեք, ապա անհրաժեշտ է մնալ տանը: Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք տնային մեկուսացման հրահանգներն այստեղ՝ [ph.lacounty.gov/covidisolation](http://ph.lacounty.gov/covidisolation) :
- Եթե դուք [սերտ շփում](#) եք ունեցել այն անձի հետ, ում COVID-19-ի պատասխանը դրական է եղել, ապա անհրաժեշտ է կարանտին պահպանել: Կարդացեք տնային կարանտինի հրահանգներն այստեղ՝ [ph.lacounty.gov/covidquarantine](http://ph.lacounty.gov/covidquarantine) :

## ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ



- Ձեռքերը լվացեք օձառով և ջրով՝ առնվազն 20 վայրկյան, յուրաքանչյուր առաքումից միջև ընկած ժամանակահատվածում և նախքան սնունդը վերցնելը և սպառողին տալը:
- Եթե օձառ և ջուր մատչելի չէ, օգտագործեք առնվազն 60% սպիրտային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոց:
- Խուսափեք չլվացած ձեռքերով աչքերին, քթին և բերանին դիպչելուց:

## ՄԱՆՐԻ ՀԵՏ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՎԵԼԸ ԵՎ ՊԱՀԵԼԸ

- Մնունդը պետք է փաթեթավորված լինի նախապես և մնա կայուն փաթեթավորված, որպեսզի առաքման ժամանակ հնարավոր աղտոտումից

# ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ (COVID-19)


Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն  
Մանդի Առաքման և Վերցնելու Ուղեցույց



զերծ մնա:

- Առաքված սնունդը պետք է տեղափոխվի կամ պահվի հարթ, լվացվող և անջրաթափանց նյութերից պատրաստված տարաների մեջ, որոնք ի վիճակի են դիմակայել հաճախակի մաքրմանը:
- Մեքենայի մեջ մաքուր, առանձնացված տարաներ ունեցեք՝ տեղափոխման ժամանակ սնունդը պահելու համար: Այդ տարաները պետք է չծորացող լինեն և սնունդը պահեն համապատասխան ջերմաստիճանում:
- Երբ առաքման ժամանակը գերազանցում է 30 րոպեն, սնունդը պետք է պահել կամ սառը (41° -ից ցածր), կամ տաք (135° -ից բարձր) ջերմաստիճաններում:

## ՎԵՐՑՆԵԼԸ ԵՎ ԱՌԱՔԵԼԸ



- Ռեստորանների կողմից բոլոր առաքվող ապրանքները պետք է փաթեթավորված և տոպրակների մեջ լինեն, ներառյալ՝ ամանեղենը, անձեռոցիկները և համեմունքները: Սա երաշխավորում է, որ վերցնելու տեղափոխման ընթացքում վարորդները կարիք չեն ունենա դիպչելու որևէ լրացուցիչ իրի:
- Վարորդներին խորհուրդ տվեք պատվերներին սպասելու ընթացքում սպառողներից 6 ոտնաչափ սոցիալական հեռավորություն պահպանեն:
- Բոլոր աշխատակիցների համար ապահովեք կտորից դիմակներ և հետևեք, որպեսզի նրանք կրեն դիմակները միմյանց կամ հաճախորդների հետ շփման ամբողջ ընթացքում:
- Վարորդները պետք է տրանսպորտային միջոցների ներսը մաքուր և սանիտարական վիճակում պահեն, ներառյալ բեռնախցիկը և (կամ) հետևի պահեստավորման մասերը:
- Վարորդները պետք է սնունդը պահեն տեղափոխման համար նախատեսված մաքուր և ախտահանված երկրորդական տարայի մեջ:

## ՄՆԱԴԻ ԱՌԱՔՈՒՄ



- Վարորդները երբեք չպետք է դիպչեն սննդին, ամբողջ սնունդը պետք է մնա իր սկզբնական փաթեթավորման մեջ:
- Խուսափեք սպառողների հետ սերտ շփումից:
- Խորհուրդ տվեք վարորդներին պայմանավորվել սպառողների հետ, որ թողնեն սնունդը դռան առջև, որպեսզի սպառողը կարողանա վերցնել սնունդը, երբ վարորդը հեռացած կլինի:

## ԱՅԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԱՌԱՔԻՉ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

# ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն  
Մանդի Առաքման և Վերցնելու Ուղեցույց



- Վարորդները պետք է օգտագործեն EPA-ի կողմից հաստատված ախտահանիչ միջոց՝ ընդհանուր ձեռք տրվող կետերը համաձայն պիտակի ցուցումների մաքրելու և ախտահանելու համար:
- Մեքենայի այն տարածքները, որոնք կանոնավոր պետք է մաքրվեն ներառում են՝ դեկը, ռադիոյի կոճակները, փոխանցման տուփի բռնակը և դռների բռնակները:
- Մնունդը վերցնող վարորդներին թույլատրվում է օգտվել ռեստորանի սանհանգույցից՝ նախքան առաքման համար սնունդ վերցնելը ձեռքերը պատշաճորեն լվանալու համար:

## ՀԻՇԵՑՈՒՄՆԵՐ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



- Հանեք փաթեթավորված սնունդը առաքման տուպրակներից և աղբը նետեք առաքման տուպրակը կամ տուփը:
- Լվացեք ձեռքերը օճառով և տաք ջրով 20 վայրկյան՝ նախքան սննդին ձեռք տալն ու ուտելուց առաջ:
- Բոլոր փչացող սննդամթերքները հնարավորինս շուտ դրեք սառնարանի մեջ, եթե դրանք գնելուց կամ առաքելուց հետո երկու ժամվա ընթացքում չեք սպառել:
- Մննդամթերքը պետք է առաքվի/ստացվի միայն տեղական առողջապահական իրավասու մարմինների կողմից թույլատրված սննդի օբյեկտներից:

i

Հավելյալ տեղեկությունների համար զանգահարեք՝ Խորհրդատվական Ծառայություններ (888) 700 – 9995 հեռախոսահամարով: COVID-19-ի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար՝ այցելեք <http://publichealth.lacounty.gov> կայքը կամ զանգահարեք Լոս Անջելես Շրջանի 2-1-1 տեղեկատվական գիծ, որն աշխատում է օրը 24 ժամ: